



N 04
“ 16 ” 01 2018 թ.

ՀՀ կրթության և գիտության
նախարար
Լ. Մկրտչյանին

Հարգելի պարոն նախարար,

Ձեզ ենք ներկայացնում «Հայրենյաց ասպետներ» ռազմահայրենասիրական կրթադաստիարակչական ծրագրի տարեկան կատարողական հաշվետվությունը՝ առ 31.12.17թ.:

1. Համաձայն ՀՀ ԿԳՆ և «Հայ ասպետ» ԿԲՀ-ի միջև 14.02.2017թ. կնքած N Ա-9.6.1/28 պայմանագրի N2 հավելվածի 1-ին կետի մինչև 01.12.17թ. նկարահանվել է 32 հեռուստախաղ՝ 96 դպրոցի մասնակցությամբ: Ընդհանուր առմամբ 32 խաղին մասնակցել է 480 հիմնական խաղացող և 576 օգնական-հանդիսատես:


1.բ կետի համաձայն հուլիս – նոյեմբեր ամիսներին ՀՀ ՊՆ-ի հետ կազմակերպվել է բանակային «Հայ ասպետ» հեռուստանախագծի անցկացում ծրագրավորված 48 գորամասի փոխարեն մասնակցել են 44-ը՝ էլնելով զինվորների քանակի նվազման արդյունքում գորամասերի կրճատման և ծառայողական առանձնահատկություններից: Սեպտեմբերին ՀՀ Ձու և ՊԲ գորամասերում անցկացվել է բանակային «Հայ ասպետ» հեռուստախաղի նախընտրական փուլ, որին մասնակցել է 44 գորամասի 220 զինվոր: Հոկտեմբերին անցկացվել է կիսաեզրափակիչ փուլը՝ 9 գորամասի 36 զինվորականի մասնակցությամբ: Իսկ նոյեմբերին անցկացվել է բանակային եզրափակիչ փուլը՝ 18 զինվորականի մասնակցությամբ:

2. Համաձայն հավելվածի 2-րդ կետի ամբողջ տարվա ընթացքում լրացուցիչ կրթության կենտրոն է հաճախել 100-110 պատանի:

3. Համաձայն հավելվածի 3.ա կետի մայիսին կազմակերպվել են սբ. Զատիկի, Համբարձման, հուլիսին՝ Վարդավառի և օգոստոսին Խաղողօրհներբի տոները, որոնցից յուրաքանչյուրին մասնակցել է նվազագույնը 100 երեխա:

Համաձայն հավելվածի 3.բ կետի «Հայրենիքի պաշտպաններին» ենթածրագրով կատարվել է այց սահմանամերձ Մարտիրոս գյուղ, կազմակերպվել է հանդիպում տեղի դպրոցի աշակերտների, գյուղի բնակիչների և մոտակա դիրքերի զինվորների հետ:

4. Համաձայն հավելվածի 4.1 կետի Արցախում նախատեսված քառօրյա արշավային ծրագիրը, որը նախատեսված էր աշնանային արձակուրդներին չի իրականացել՝ դպրոցներում տարածված վիրուսային հիվանդությունների պատճառով, որի մասին ՀՀ ԿԳ նախարարին տեղեկացրել ենք նամակով և խնդրել այն հետաձգելու իրավունք տալ: Սակայն համաձայնություն չստանալու արդյունքում այս արշավի համար նախատեսված գումարը՝ 800000(ութ հարյուր հազար) դրամը, վերադարձվել է պետություն:



Համաձայն հավելվածի 4.2-րդ կետի օգոստոսի 1-14-ը կազմակերպվել է 3 հերթափոխով արշավ Վայոց ձորում, որին մասնակցել են 210 աշակերտ և 25 ուսուցիչ:

Հիմնավորում- Լոռու մարզում նախատեսված արշավը միացվել է Վայոց ձորի արշավին միջոցների և ժամանակի տնտեսման նպատակահարմարության համար(նման մեծ ճամփարի համար բոլոր տարածքները վճարովի էին, որը նախատեսված չէր մեր նախահաշվով): Նախատեսվածից ավել մասնակցած 25 հոգու ծախսը հոգացել ենք լրացուցիչ հովանավորության շնորհիվ:

Համաձայն հավելվածի 4.4 կետի սեպտեմբերի 21-ին «Գազաթների հաղթահարում» ծրագրով կազմակերպվել է լեռնագնացություն դեպի Արա լեռան գագաթ, որին մասնակցել են 120 աշակերտ և 20 ուսուցիչ:

Հիմնավորում- նախատեսվածից ավել մասնակցած 50 երեխայի ծախսը հոգացել ենք լրացուցիչ հովանավորության շնորհիվ:

6. Համաձայն հավելվածի 4.5 կետի հուլիսի 5-9-ը 18 հոգու մասնակցությամբ կազմակերպվել է քառօրյա շրջագայություն Արևմտյան Հայաստանում: Երեխաները այցելել են Կարս, Վան, Ալաշկերտ, Արճեշ, Անի քաղաքներ, Բերկրիի և Թորթումի ջրվեժներ և այլն:

Հիմնավորում – շրջագայությունը կատարվել է հուլիս ամսին՝ հաշվի առնելով սույն տարվա եղանակային անոմալիան՝ օգոստոսի սաստիկ շոգերին նման շրջագայության անհարմարությունը:

Շնորհակալություն ենք հայտնում արդյունավետ և հայրենանպաստ համագործակցության համար:

Տնօրեն
Կ. Տոնյան

